ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

21/06/2017

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՔԱՂՎԱԾՔ

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 21.06.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Արտյոմ Գրիգորյանը, Մեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը,Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Մեյրան Աղաբեկյանը և Արևիկ Լոբյանը :

Նիստին բացակայում էին՝

"Լուսավոր Հայաստան" կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը , Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը;*

"Հայկական Վերածնունդ" կուսակցության ավագանու անդամներ *Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;*

"Բարգավաճ Հայաստան" կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը,* համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 11.25-ին նիստը հայտարարեց բացված և և առաջարկեց հաստատել օրակարգը՝ ամբողջությամբ և քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:
Միաձայն՝ 15 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2016թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
   զեկ.՝ Գ.Բաղյան:

2. Վանաձոր համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին
   զեկ.՝ Գ.Բաղյան:

3. Վանաձոր համայնքի 2016թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
   զեկ.՝ Վ.Գրիգորյան:

4. Վանաձոր համայնքի «Վանաձորի երգի թատրոն» և «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
   զեկ.՝ Վ.Գրիգորյան:

5. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 18-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 18-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
   զեկ.՝ Վ.Գրիգորյան:

6. Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 13-ի Վանաձոր համայնքի «Թիվ 1 մշակույթի տուն», «Թիվ 2 մշակույթի տուն», «Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման և Վանաձոր համայնքի «Մշակութային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 586-Ա որոշումը և Վանաձոր համայնքի «Մշակութային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին
զեկ.՝ Ա.Հովհաննիսյան:

7. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ին լիազորելու մասին
զեկ.՝ Ա.Հովհաննիսյան:

8. Վանաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 09-ի «Վանաձորի համայնքի ղեկավարին կից, Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
զեկ.՝ Ա.Հովհաննիսյան:

9. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

10. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

11. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթ անցկացնելու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

12. Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոցի թիվ 43/1 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Ռաֆայել Մխիթարյանին օտարելու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

13. «Լոռի-ջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ին շինություններ և հողամաս տրամադրելու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

14. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2017թ. հողային հաշվեկշիռը հաստատելու մասին
զեկ.՝ Ս.Աբովյան:

15. «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու և Վանաձոր համայնքի ավագանու 30 մայիսի 2017թ. թիվ 45-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին
զեկ.՝ Կ.Սարոյան:

16. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին
զեկ.՝ Մ.Ասլանյան:

ԸՆԹԱՑՔԸ

1. ԼՍԵՑԻՆ - Մինչ օրակարգային խնդիրներին անցնելը, ավագանու անդամ Ա.Մատինյանը քաղաքապետին խնդրեց տեղեկատվություն տրամադրել քաղաքում իրականացվող ասֆալտապատման աշխատանքներ վերաբերյալ:
Քաղաքապետը տվեց պարզաբանումներ և մանրամասնեց ծրագրային գործընթացներին վերաբերվող հարցերը:

Այնուհետ , միաձայն՝ 15 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ , ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2016թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- զեկուցեց՝ կրթության և մշակույթ բաժնի պետ Գ.Բաղյանը:

Նիստը վարողը և աշխատակազմի քարտուղարը ներկայացին լրացուցիչ պարզաբանումներ և առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին

-Զեկուցեց՝ կրթության և մշակույթ բաժնի պետ Գ.Բաղյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2016թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

-զեկուցեց՝ ֆինանսական բաժնի պետի տեղակալ Վ.Գրիգորյանը:

Զեկուցումից հետո հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տվեց նիստը վարողը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Գ.Քալանթարյանը՝ տրամադրել տեղեկություն համայնքին պատկանող արվեստի գործերի մասին, որոնք տեղափոխվել են Երևան:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը, կրթության և մշակույթ բաժնի պետ Գ.Բաղյանը և զեկուցողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 , ձեռնպահ՝ 1 (Գ. Քալանթարյան), ընդունվեց որոշում :

5. ԼՍԵՑԻՆ Վանաձոր համայնքի «Վանաձորի երգի թատրոն» և «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

-Զեկուցեց՝ ֆինանսական բաժնի պետի տեղակալ Վ.Գրիգորյանը

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 18-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 18-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

-Զեկուցեց՝ ֆին բաժնի պետի տեղակալ Վ.Գրիգորյանը:

Նախագծի մասին լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նախագիծը նիստը վարողը դրեց քվեարկության :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 13-ի Վանաձոր համայնքի «Թիվ 1 մշակույթի տուն», «Թիվ 2 մշակույթի տուն», «Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման և Վանաձոր համայնքի «Մշակութային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 586-Ա որոշումը և Վանաձոր համայնքի «Մշակութային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին

- Զեկուցեց՝ իրավաբանական բաժնի պետ Ա.Հովհաննիսյանը

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Գայանե Քալանթարյանը՝ նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և զեկուցողը:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում

8. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ին լիազորելու մասին

- զեկուցեց՝ իրավաբանական բաժնի պետ Ա.Հովհաննիսյանը

Ավագանու բոլոր անդամները միաձայն որոշում ընդունեցին լիազորել Սոխակ Մելքոնյանին, ՀՀ Վարչական դատարանում համայնքի շահերը սահմանված կարգով ներկայացնելու նպատակով:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 09-ի «Վանաձորի համայնքի ղեկավարին կից, Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- զեկուցեց՝ իրավաբանական բաժնի պետ Ա.Հովհաննիսյանը

Նիստը վարողի կողմից լրացուցուցիչ պարզաբանումներից հետո հարցեր չհնչեցին զեկուցողին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս.Աբովյանը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս.Աբովյանը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոցի թիվ 43/1 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Ռաֆայել Մխիթարյանին օտարելու մասին

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս.Աբովյանը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - «Լոռի-ջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ին շինություններ և հողամաս տրամադրելու մասին

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս.Աբովյանը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու և Վանաձոր համայնքի ավագանու 30 մայիսի 2017թ. թիվ 45-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ.Սարոյանը:

Զեկուցողին և նիստը վարողին հարցեր ուղղեցին՝

Գայանե Քալանթարյանը ,Սեյրան Ղամբարյանը՝ անվարձահատույց տրվող տարածքների արդյունավետ օգտագործման և հաշվետվողականության վերաբերյալ

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը, զեկուցողը, աշխատակազմի քարտուղարը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 , ձեռնպահ 2 (Գ.Քալանթարյան, Ս.Ղամբարյան), ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել սեպտեմբերի 19-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության: Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի սեպտեմբերի 19-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց

Աշխատակազմի Ք.Տ. և Ա. բաժնի պետ Է. Հովսեփյանը